

ԳԼՈՒԽ ԺԷ ԲՍԱՆԵՕԹ ՏԱՐԻ

Բայց այդ Յովնան ո՞վ է, այդ սասնցուոց զօրավարը. տեսայ զինք պատերազմի մէջ քաջ, բայց երբ ընկերութեան մէջ է՝ գա զամենքը կը սառեցնէ, եթէ խօսի ակամայ կը խօսի, ծիծաղը նաեւ կարծես թէ հեգնութիւն մ'է. գիւնի բերանը չի դներ. նուագարան, երգ օրօրի ձայն են իրեն համար: Բայց պետք է խաստովանիլ, որ մեծ տարբերութիւն կայ իր եւ իր լեռնականաց մէջ, խօսքը, կերպը, մտածութեանց խելօքութիւնը, շարժմանց զգուշաւորութիւնը, վերջապէս իր ամէն վարմունքն յայտնի կ'ընեն թէ բարձր մարդ է, եւ ես կընդունիմ այս մարդը գործքի, պատերազմի գլուխ լաւ՝ բայց ինչոյից զուարճութեանց մէջ բան մը չարժէր. լաւ՝ ըրաւ, որ գնաց:

Այսպէս կը խոսէր Աշոտ կամաց ձայնով հոսորովու հետ, եւ նա պատասխանեց.

– Դու այդ մարդը լաւ կը դատես, այդ մարդը զուարճութեան մարդ չէ, միայն զօրծի մարդ է. բայց տե՛ս, եթէ նա ուզէր մեր նախարարաց կարգը կ'անցներ եւ շատերէն էլ կը գերազանցէր, վասնզի իւր լեռնցիք այնպէս իրեն կը հնազանդին եւ զինք կը սիրեն, որ եթէ մեռնիլ հրամայէ կը մեռնին: Տե՛ս, Սասուն ո՛ւր, մենք ո՛ւր, Դուին ո՛ւր, բայց երեք չարագործ կախելու համար ամէն վտանգ յանձն կառնուն այդ Սասնի տղայք եւ իրեն հետ կ'երթան այդ անձանօթ երկիրներ, ձիւնին, ցուրտին, սառին, որպէսզի Յովնան ու կամքը կատարուի:

– Բայց ի՛նչ հասկանամ Դուինի դուռը այդ մարդիկը կախելէն, առջի ծառը մի թէ յարմար չէ մատնիչ մը, չարագործ մը կախելու համար:

– Մեծ տարբերութիւն կայ Բուղայի աչառ առջեւ տանիլ կախել դաւաճան հայը, որ նորա անզգամութեանը գործիք եղաւ անապատի մը մէջ կախելէն: Դաւաճաններու իմաց տալ է թէ կայ այդ մեռեալ կարծուած Յայաստանի մէջ դատաստան մը, որ կը հսկէ, կը դատէ, կը վճռէ եւ կը զօրծադրէ: